

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆԸ ԻՍԼԱՄԻ ՄԱՍԻՆ

Պարզև Բարսեղյան

Մաղաքիա արք. Օրմանյանի հիրավի կոթողային համարվող աշխատության՝ «Ազգապատումի» մասին բազմիցս գրվել է և խոսվել: Ընդհանրապես Մաղաքիա Արք. Օրմանյանի կյանքին, գործունեությանը, հոգևոր-գրական ժառանգությանը անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ ու հետազոտողներ, և կարելի է ասել նրա մասին ամեն ինչ ասված է: Սակայն «Ազգապատումի» իրական արժեքը ոչ միայն այն է, որ սա հայոց պատմության և Հայոց եկեղեցու պատմության մինչ օրս անգերազանցելի համարվող կարևորագույն ուսումնասիրություններից մեկն է, այլև այն, որ Օրմանյան պատրիարքի գլխավոր ստեղծագործությունը պատմագիտական, աստվածաբանական, եկեղեցաբանական և կրոնագիտական նորանոր ուսումնասիրությունների հնարավորություն է ընձեռում:

Այս առումով բավականին հետաքրքրական են Օրմանյանի՝ իսլամի մասին գիտելիքներն ու պատկերացումները, որոնք ոչ միայն տեսական մակարդակում էին հայտնի մեծանուն հեղինակին, այլև նա գործնականում մեծ շփումներ ուներ իսլամադավան շրջանակների հետ և լավագույնս տիրապետում էր նաև Օսմանյան կայսրության տարածքում գործող իսլամական իրավունքի նորմերին և սկզբունքներին: Իհարկե հայ իրականության մեջ իսլամի վերաբերյալ ուսումնասիրությունները բավականին շատ են և հատկապես կրոնագիտական մակարդակում նոր գիտելիքների կարիք չկա: Բնականաբար, այդպիսի պայմաններում մեր առջև խնդիր չենք դնում իսլամի մասին հերթական կամ նոր ուսումնասիրություն իրականացնելու: Սակայն Մաղաքիա արք. Օրմանյանի հոգևոր-գրական ժառանգության լիարժեք և կատարյալ վերլուծության համար հետաքրքրություն ներկայացնող հիմնահարցերի շրջանակում թերևս կարելի է առանձնացնել նաև իսլամի պատմությանը, բնույթին և այլ առանձնահատկություններին վերաբերող օրմանյանական դիտարկումներն ու մոտեցումները:

Քննարկվող հիմնահարցի հետազոտությունը իրականացրել ենք «Ազգապատում»-ի հիման վրա և Հայոց եկեղեցու պատմության ընթացքի մեջ դիտարկել իսլամի մասին Մաղաքիա արք. Օրմանյանի արտահայտած տեսակետները, մոտեցումները և պատկերացումները: Հատկապես շեշտադրումները զարգացրել ենք այն ուղղությամբ, թե «Ազգապատում»-ում իսլամի վերաբերյալ բազմաբնույթ տեղեկությունները որքանով են արտացոլում իսլամի պատմության, դավանանքի, պաշտամունքի, իրավունքի, բարոյականության և այլ կողմերը, և օրմանյանական մոտեցումները որքանով են իրական և արդիական:

«Ազգապատում»-ում իսլամի մասին տեղեկությունները ժամանակագրորեն և ըստ բովանդակության կարելի է բաժանել մի քանի մասի. տեղեկություններ իսլամի հիմնադիր Մուհամեդի մասին, արաբական արշավանքներ և հայ-արաբական փոխառնչություններ, իսլամադավան երկրների հետ բազմաբնույթ հարաբերություններ, իսլամական պետություն-կրոն, կրոնական համայնք փոխհարաբերություններ և իսլամական իրավունքի նորմեր:

Իսլամին առնչվող հիշատակություններից առաջին հերթին պետք է առանձնացնենք Մուհամեդի մասին տեղեկությունները, որոնք Մաղաքիա արք. Օրմանյանը ներկայացնում է արաբական առաջին արշավանքի կապակցությամբ: Ըստ այդմ մեծանուն գիտնականը խոսում է իսլամի ծագման մասին՝ ի ցույց դնելով իսլամի վերաբերյալ իր մանրամասն և ամբողջական գիտելիքները: Ընդ որում, Օրմանյանը հիմնականում օգտվում է հայ պատմիչների հիշատակություններից¹: Մասնավորապես, նա խոսում է իսլամի հիմնադրի մասին, ներկայացնում նրա ծնունդը (այն թվագրելով 571թ.)², մանկությունը, երիտասարդությունը, քարոզչական գործունեությունը՝ կրկնելով պատմիչներ Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու հիշատակությունը Սարգիս Բխիրա (նաև հայ կարծվող) անվամբ արիոսական մի միայնակյացի մասին, որի հետ շփումները, ըստ մեր պատմիչների, ազդել են Մուհամեդի կրոնական աշխարհայացքի վրա՝ նպաստելով իսլամի քարոզչությանը³: Այս հիշատակությունը

¹ **Մաղաքիա արք. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 784-786:

² Ժամանակակից իսլամագիտության մեջ Մուհամեդի ծննդյան տարեթիվը որպես կանոն նշվում է 570 թ., տե՛ս **Уинтл, Джастин**, История ислама, М., 2008, с. 3:

³ **Նույն տեղում**, տե՛ս նաև **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 99-100, **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 53-54:

հատկանշական է հատկապես այն առումով, որ մեր աղբյուրներում Արինուսի և Կերինթոսի աղանդի հետևորդ համարվող վանականին¹ օտար հեղինակները համարում են նեստորական²: Այս մասին թերևս գիտեր նաև Մաղաքիա արք. Օրմանյանը, սակայն նա հավատարիմ է մնում հայկական աղբյուրներին և Մուհամեդին ներկայացնում որպես արիոսական: Սակայն Օրմանյանը հավատարիմ չի մնում հայ պատմիչներին Մուհամեդի անվան կիրառության հարցում (Մուհամմէտ) և չի օգտագործում «Մահմետ» կամ «Մահմեդ» անունը, որն ավելի գործածական է պատմիչների հիշատակություններում՝ սկսած Սեբեոսից. «Յայնմ ժամանակի այրոմն ի նոցունց իսկ յորդոցն Իսմայելի, որում անուն էր Մահմէտ...»³: Այս դեպքում Մաղաքիա արք. Օրմանյանը ճիշտ է վարվում, քանի որ հոգեհարազատ է մնում իսլամի մարգարեի անվան արաբական բնագրին, այն դեպքում, երբ դեռևս Սեբեոսից սկսած, հայ իրականության մեջ արմատավորվում է Մահմեդ անունը, որից էլ հավանաբար հետագայում սկիզբ է առնում Իսլամ կրոնի համար մինչ օրս սխալմամբ կիրառվող «Մահմեդականություն» եզրը: Այս եզրի փոխարեն Մաղաքիա արք. Օրմանյանը հիմնականում օգտագործում է «Իսլամություն» բառը, որն ավելի ճիշտ է արտացոլում իսլամի էությունը և գրեթե բոլոր լեզուներում կիրառելի է Իսլամ տարբերակով: Այնուամենայնիվ, պետք է նշենք, որ «Իսլամություն» եզրը հիմնականում հանդիպում է արևմտահայերենում, իսկ արևելահայերենում կիրառելի է «Իսլամ» ձևը, չնայած որ որոշ դեպքերում Օրմանյանը «իսլամ» եզրը գործածում է նաև կրոնի հետևորդի իմաստով («մուսուլման»)⁴:

Իսլամի առաջացման մասին խոսելիս Մաղաքիա արք. Օրմանյանը ցուցաբերում է իսլամի պատմության փայլուն իմացություն՝ մանրամասն ներկայացնելով Մուհամեդի քարոզչության և վաղ իսլամի տարածման շրջանում առաջ եկած այն դժվարություններն ու փորձությունները, որոնց դիմագրավեց և որոնց միջով անցավ նոր կրոնի հիմնադիրը⁵: Մու-

¹ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, էջ 100:

² Տե՛ս **Ирвинг В.** Жизнь Магомета, Мн. 1995, с. 26.

³ **Սեբեոս**, Պատմութիւն Սեբեոսի, Երևան, 1979, էջ 135: Հարկ է նաև նշել, որ Սեբեոսը համարվում է Մուհամեդի մասին առաջին «ստուգապատում պատմիչը»: Այս մասին մանրամասն տե՛ս **Ղևոնդ**, Պատմություն, Երևան, 1982, ծանոթ. 3, էջ 136:

⁴ Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա, էջ 902:

⁵ **Նույն տեղում**, էջ 785-786:

համեղի մարգարեական առաքելությանն անդրադառնալիս էլ մեծանուն հեղինակը թվարկում է Մուհամեդին նախորդած իսլամական մարգարեներին՝ Ադամին, Աբրահամին, Մովսեսին և Հիսուսին՝ օգտագործելով քրիստոնեությանը հոգեհարազատ անունները, չնայած որ ակնհայտորեն տիրապետում է դրանց իսլամական տարբերակին¹:

Իսլամի պատմությանն առնչվող հաջորդ դրվագները, որոնք ներկայացված են «Ազգապատում»-ում, վերաբերում են արդեն արաբական արշավանքներին հաջորդած շրջանին: Այս դեպքում ևս Օրմանյանը հաստատում է, որ քաջատեղյակ է իսլամի պատմությանը և հայոց պատմության տվյալ ժամանակահատվածի մանրամասները ներկայացնում է Արաբական խալիֆայության պատմության կարևորագույն իրադարձությունների համադրմամբ: Մասնավորապես, Մաղաքիա արք. Օրմանյանը նախ համառոտ ներկայացնում է Դամասկոսի կառավարիչ Մուավիայի խալիֆ հռչակվելը², իսկ ավելի ուշ մանրամասնորեն ներկայացնում է Օմայանների և Աբասյանների հակամարտությունը և Արաբական խալիֆայությունում վերջինների իշխանության գալը³: Օրմանյանը իրավացիորեն Օմայանների դեպքում շեշտում է իսլամի պատմության մեջ առկա այն հայտնի տեսակետներից մեկը, որ Օմայանները բռնությամբ են տիրացել իշխանությանը, այն խլելով խալիֆի իրական հավակնորդ համարվող Ալիի սերունդներից⁴: Աբբասյանները, որոնք Մուհամեդի հորեղբայր Աբբասի սերունդներն էին, համարում էին, որ իրենք վերականգնում են պատմական արդարությունը և իրենց իրավունքն է հանդես գալ որպես խալիֆ: Այստեղ ևս պետք է առանձնացնենք և արժանիորեն գնահատենք այն, որ Մաղաքիա արք. Օրմանյանը քաջատեղյակ է իսլամի պատմությանը և մանրամասն ներկայացնում է նաև խալիֆայության համար պայքարում երկու հայտնի գերդաստանների՝ Ալի խալիֆի և Մուհամեդ մարգարեի հորեղբայր Աբբասի սերունդների հակամարտությունը, որն ի վերջո ավարտվեց նրանով, որ Ալիի թոռ Մուհամեդը իր իրավունքը փոխանցեց Աբբասի ծոռ Մուհամեդին, որի որդի Աբդուլ-Աբբասն էլ

¹ Նույն տեղում, էջ 786:

² Նույն տեղում, էջ 864:

³ Նույն տեղում, էջ 1012:

⁴ Մանրամասն տե՛ս **История религии**. В 2 т., Т. 2, М., 2002, с. 516:

դարձավ Աբբասյան հարստության հիմնադիրը¹:

«Ազգապատում»-ում ներկայացված հաջորդ կարևոր խնդիրը, որն առնչվում է իսլամին, իսլամի քաղաքական ուղղվածությունն է և իսլամական պետության մեջ կրոն-պետություն փոխհարաբերությունների խնդիրը: Թերևս ավելորդ չէ նշել, որ իսլամն ի սկզբանե քաղաքականացված կրոնական համակարգ է, քանի որ խալիֆը, որը համարվում էր Մուհամեդի հաջորդը, իսլամական համայնքի՝ ումմայի միաժամանակ թե՛ կրոնական, թե՛ քաղաքական և թե՛ դատաիրավական առաջնորդն է: Դեռևս Մուհամեդի հաջորդներից սկսած՝ իսլամական պետության կառուցվածքը ենթադրում էր ենթակա և նվաճված ժողովուրդների հատուկ կարգավիճակ, որից էլ բխում էր նրանց նկատմամբ վարվող քաղաքականությունը: Եթե իսլամի վաղ շրջանում գործում էր դեռևս Ղուրանում ամրագրված էր այն միտքը, որ հրեաներն ու քրիստոնյաները գրքի մարդիկ են (Ղուր., 5:5, 5:82), իսկ անհավատները հեթանոսներն են, ապա լայնարձակ խալիֆայության հաստատումը և բազմաքանակ և տարբեր կրոններ դավանող ժողովուրդների նվաճումը ստիպեց իսլամական առաջնորդներին հստակեցնել նվաճված ժողովուրդների կրոնական կարգավիճակը: Նվաճված ժողովուրդները ստանում էին «հովանավորյալի» (արաբ. ահլ ազ-զիմմե) կարգավիճակ՝ ճանաչելով իսլամական իշխանությունը և պարտավորվելով հարկ վճարել²: Իհարկե այս մոտեցումը ոչ միշտ էր գործում և բազմաթիվ են օրինակները, երբ իսլամական պետություններում հրեաների և քրիստոնյաների նկատմամբ իրականացվել են դաժան հալածանքներ և ստեղծվել են գոյության համար անմարդկային պայմաններ³: Այս առումով բացառություն չէր նաև Հայաստանը և հայ ժողովուրդը, որն իսլամի անմիջական ազդեցությունն իր մաշկի վրա զգաց արդեն արաբական առաջին արշավանքներից սկսած:

Ինչպես հայտնի է, արաբական նվաճումների արդեն իսկ առաջին տարիներից ակնհայտ դարձավ, որ բյուզանդական քաղկեդոնական եկեղեցու հալածանքները այլադավան եկեղեցիների նկատմամբ պարարտ հող էին նախապատրաստել իսլամական միջավայրում հակաքաղ-

¹ Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1012-1013:

² Մանրամասն տե՛ս *История религии*. В 2 т., с. 518:

³ Уинтл, Джастин, История ислама, с. 16.

կեդոնական եկեղեցիների առավել բարենպաստ գոյության համար¹: Մաղաքիա արք. Օրմանյանը ևս այս հանգամանքի վրա ուշադրություն է դարձնում և իրավացիորեն նշում, որ Հայոց կաթողիկոս Ներսես Գ Տայեցու և Թեոդորոս Ռշտունու արաբների հետ հարաբերություններ ձևավորելու հարցում հակամարտությունը ուներ նաև օբյեկտիվ այն պատճառը, որ «... Յոյներուն ընթացքն ալ զայրոյթ եւ զզուանք պատճառած էր»²: Արդյունքում կնքվեց 652 թ. հայ-արաբական պայմանագիրը, որը բավականին բարենպաստ կետեր էր պարունակում հայերի համար:

«Ազգապատում»-ի հաջորդ կարևոր դրվագը կրոն-պետություն հարաբերությունների տեսանկյունից Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսի և Օմար Բ խալիֆի հանդիպումն է: Նախ պետք է նշենք, որ արդեն 7-րդ դարի վերջին և 8-րդ դարասկզբին Արաբական խալիֆայությունում այլակրոն ժողովուրդների նկատմամբ նախնական վերաբերմունքը փոխվել էր, և կարգավիճակի ավելի հստակ չափանիշներ էին սկսել գործել, որոնք արդեն բխում էին իսլամական իրավունքի նորմերից: Դա զգացվում է նաև հայ պատրիկների նշանակման հարցում, քանի որ, ինչպես դիպուկ նշում է նաև Օրմանյանը՝ «Արաբացիք միայն պետական-քաղաքականը պահած էին իրեն ոստիկաններուն, այսինքն է ելեմտական եւ զինուորական վարչութիւնները, իսկ կենցաղական-քաղաքական կը յանձնէին քրիստոնեայ անձերու, տեսակ մը ներքին ինքնավարութեան իրաւունքով: Ասոնք առաջ *պատրիկ* անունը կը կրէին յունական կոչմամբ, բայց վերջէն ամիրապետներ դժուարութիւն չքաշեցին *թագաւոր* անուն եւ պատիւ եւ հանդերձանք ալ տալ անոնց...»³: Արաբական իշխանությունները հայոց կաթողիկոսին էին վերապահել դատական իշխանությունը և եկեղեցական, ամուսնաընտանեկան, բարոյական և այլ հարաբերությունների կարգավորումը: Իրականում այս ամենը *զիմմեի* կարգավիճակից բխող գործառույթներ էին, որոնք տրված էին կրոնական փոքրամասնությանը, սակայն հայերին դեռևս չէին ճանաչել պաշտոնապես իբրև առանձին կրոնական համայնք (զիմմե): Կրոնական հարցերում, այնուամենայնիվ, խալիֆայությունը իրեն էր վերապահում վերջնական պատժի սահմանումը, եթե խոսքը վերաբերում էր քրիստոնեություն-իս-

¹ Бартольд В. В., Сочинения, Т. 6, М., 1966, с. 225.

² Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 839-840:

³ Նույն տեղում, էջ 901:

լամ հարաբերություններին: Սա է պատճառը, որ հայոց եկեղեցական պատմագրությունը և ավանդությունները հիշատակում են իսլամից հրաժարման համար նահատակված և սրբացված մի շարք անձանց: Այս ամենին լիակատար տիրապետում է նաև Մաղաքիա արք. Օրմանյանը, Դավիթ Դվնեցու մասին նշելով, որ «... նա նախկին իսլամ մըն էր՝ իր հավատքը ուրացած, ինչ որ իրենց օրէնքով մահապարտության արժանի գործ կը համարուէր»¹:

Հովհաննես Գ Օձնեցու և Օմար խալիֆի հանդիպումը և ձեռք բերված պայմանավորվածությունները ևս պետք է դիտարկել հայերին կրոնական համայնքի կարգավիճակ տալու արաբական իշխանությունների ցանկությունից, որի արդյունքը եղավ այն, որ հայոց հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցավ եկեղեցու դերակատարության մեծացում և բարձրացում: Սա նշանակում էր, իսլամական պետությունը չէր խառնվում այլադավան հայերի ծիսապաշտամունքային կյանքին, *զիմմեի* կարգավիճակում հայերը ունեին սեփական դատական մարմինները, նրանց չէր արգելվում զբաղվել արհեստագործությամբ կամ առևտրով: Թերևս ավելորդ չէ նշել, որ *զիմմեի* կարգավիճակով քրիստոնեական համայնքների գոյության փաստին Մաղաքիա արք. Օրմանյանը անշուշտ ծանոթ էր, բայց Հայոց եկեղեցու պատմության վերոհիշյալ իրադարձությունների նկարագրության ընթացքում չի օգտագործում *զիմմե* եզրը:

Պետություն-կրոն և կրոնական համայնք հարաբերությունների մեկ այլ հայտնի ժամանակահատված է Կ. Պոլսի հայոց պատրիարքության հիմնումը Օսմանյան կայսրության կողմից, որին Օրմանյանը մանրամասնորեն անդրադառնում է Ազգապատումի Բ հատորում: Նախ Օրմանյանը նշում է, որ «Օսմանեանք կրօնական ազատութիւնն ալ լիապէս կը յարգէին, ինչ որ Հայերը կը քաջալերէր, մինչ Յունական կայսրութիւնը կրօնական բռնադատութիւններովը ստիպած էր հայերը իրմէ հեռու մնալ...»²: Այս քաղաքականության շարունակությունը եղավ Կ. Պոլսի գրավումից հետո հայերի նկատմամբ Օսմանյան իշխանությունների վերաբերմունքը: Ինչպես նկատում է Օրմանյանը. «Իսլամ պետութեանց համար կարեւոր ու կենսական խնդիր մը եղած է իրենց հպատակ քրիստոնեայ ժողովուրդներուն կենցաղական դիրքը ճշդել եւ այդ մասին օրինական կացու-

¹ Նույն տեղում, էջ 902-903:

² Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 2342-2343:

թին մը կազմել: Այդ դժուարութեանց պատճառը իրենց քաղաքական եւ կենցաղական օրէնսդրութիւնն էր, որ բովանդակ կրօնական սկզբունքներու եւ դուրանական պատգամներու վրայ հիմնուած ըլլալով, անհնար էր քրիստոնեաներու պատշաճեցնել: Ուստի երկու ծայրայեղ որոշումներու կը մղուէին, ինչպէս որ պարագային կիրքերը կը գրգռէին. կամ կոտորածով կը սպառէին եւ բռնութեամբ կրօնափոխ կ'ընէին, եւ կամ զինուորական եւ ելեմտական վարչութիւնները իրենց վերապահելով, բոլոր կենցաղական օրէնքները անոնց կամքին կը թողուէին, անոնց մէջէն պատասխանատու պետ մը նշանակելով»¹: Այս սկզբունքով էլ օսմանյան տիրակալները վերաբերում էին նորահպատակ քրիստոնյաներին և Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան հիմնումը դեռևս արաբների շրջանից եկող և իսլամի ավանդություններին հոգեհարազատ որոշում էր: Փաստացի հայոց պատրիարքի նշանակումը Ֆաթիհի կողմից, ինչպես դիպուկ նկատել է մեծանուն հոգևորականը, որոշ չափով նահանջ էր արաբական ավանդությունից, որովհետև հայերին քաղաքական առանջնորդ (ինչպես պատրիկն էր) նշանակելը «... զօրացնել կ'ըլլար մայրաքաղաքի քրիստոնէից դիրքը...»²: Ուստի լավագույն լուծումը Ֆաթիհը համարում էր կրօնական ինքնավարության հաստատումը հոյների, այնուհետև հայերի համար, որի արդյունքում հոգևոր առաջնորդը ստանձնում էր նաև համայնական կյանքի ընդհանուր առաջնորդությունը, որով փաստացի ճանաչվում էին կրօնական փոքրամասնությունների իրավունքները: Արդյունքում հայոց պատրիարքի «... իրաւասութեան յանձնուեցաւ, կրօնք, եկեղեցի, պաշտամունք, եկեղեցականութիւն, դաստիարակութիւն, ուսում, ամուսնութիւն, ընտանիք, ժառանգութիւն, բարեգործութիւն, անհատականութիւն, ազգահամար ...»³ և այլն: Բավականին հետաքրքրական է Մաղաքիա արք. Օրմանյանի այն դիտարկումը, որ «... այդ դրութիւնը, որ ստէպ *առանձնաշնորհում* անունով կը յիշուի, բնավ շնորհք մը, ազատ պարգեւ մը, եւ բացառիկ առավելութիւն մը չէ, այլ կատարելապէս Իսլամ ժողովուրդին ունեցած դիրքին հաւասարաչափ զուգակշիռն է, եւ Օսմանեան պետութեան օրէնսդրական դիրքին բացար-

¹ Նույն տեղում, էջ 2509-2510:

² Նույն տեղում, էջ 2510:

³ Նույն տեղում, էջ 2512:

ծակ պահանջն է»¹: Պետք է հատկապես շեշտենք այն կարևոր հանգամանքը, որ Օսմանյան կայսրության այսպիսի քաղաքականությունը հետագայում ուղղակի վերածվեց կրոնական փոքրամասնություններին առանձին կարգավիճակի՝ **միլլեթի** շնորհման հիմքի:

Այսպիսով, Մաղաքիա արք. Օրմանյանի հանրահոշակ աշխատության նույնիսկ հպանցիկ և ոչ ամբողջական վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ մեծանուն հոգևորականը լիովին տիրապետում է իսլամի մասին բարձրակարգ գիտելիքների, և թերևս չափազանցություն չի լինի, եթե արձանագրենք, որ Օրմանյան պատրիարքի «Ազգապատումը» ոչ միայն հայոց պատմության և Հայոց եկեղեցու պատմության դասագիրք է, այլև որոշ դրվագներում կարող է ծառայել որպես իսլամի վերաբերյալ գիտելիքների յուրատեսակ աղբյուր:

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆԸ ԻՍԼԱՄԻ ՄԱՍԻՆ

Պարզև Բարսեղյան

Բանալի բառեր՝ Մաղաքիա արք. Օրմանյան, Հայաստան, իսլամ, եկեղեցի, պեղություն, արաբական արշավանքներ, կրոնական համայնք, իսլամական իրավունք

Մաղաքիա արք. Օրմանյանի «Ազգապատումը» պատմագիտական, աստվածաբանական, եկեղեցաբանական և կրոնագիտական նորանոր ուսումնասիրությունների հնարավորություն է ընձեռում: Այս առումով բավականին հետաքրքրական են Օրմանյանի՝ իսլամի մասին գիտելիքներն ու պատկերացումները, որոնք մեծանուն հեղինակին հայտնի էին տեսական և գործնական մակարդակներում: Քննարկվող հիմնահարցի հետազոտությունը իրականացվում է «Ազգապատում»-ի հիման վրա և Հայոց եկեղեցու պատմության ընթացքի մեջ դիտարկվում են իսլամի մասին Մաղաքիա արք. Օրմանյանի արտահայտած տեսակետները, մոտեցումներն ու պատկերացումները, որոնք կարելի է բաժանել մի քանի մասի. տեղեկություններ իսլամի հիմնադիր Մուհամեդի մասին, արաբական արշավանքներ և հայ-արաբական փոխառնչություններ, իսլամադավան երկրների հետ բազմաբնույթ հարաբերություններ, իսլամական պետություն-կրոն, կրոնական համայնք փոխհարաբերություններ և իսլամական իրավունքի նորմեր:

¹ Նույն տեղում:

АРХИЕПИСКОП МАЛАХИЯ ОРМАНЯН ОБ ИСЛАМЕ

Փարգև Բարսեղյան

Ключевые слова: *архиепископ Магакя Орманян, Армения, ислам, церковь, государство, арабские завоевания, религиозная община, исламское право*

“Ազգապատմ” (“История нации”) архиепископа Малахии Орманяна обуславливает проведение новых исследовательских работ по теологии, экклезиологии и религиоведению. В этом смысле достаточно примечательны знания и представления Орманяна об исламе, которыми выдающийся автор обладал на теоретическом и практическом уровнях. Изучение поставленной нами проблемы проводится на основе “Ազգապատմ”, и в рамках истории Армянской Церкви рассматриваются точка зрения, взгляды и представления М. Орманяна об исламе, которые можно разделить на следующие группы: сведения об основоположнике ислама Мухаммеде, арабские завоевательные походы и армяно-арабские отношения, многосторонние взаимосвязи с исламскими странами, исламская модель взаимоотношений между государством и религией, религиозной общиной и нормы исламского права.

MALAKIA ARC. ORMANYAN: ABOUT ISLAM

Pargev Barseghyan

Key words: *Malakia arc. Ormanyan, Armenia, Islam, church, country, Arabic invasions, religious community, right in Islam*

“Azgapatum” of Malakia arc. Ormanyan provides new opportunities to study historical, theological, ecclesiological and religious perspectives. In this regard, it is quite interesting that Ormanian's knowledge and understanding of Islam, known to the author at theoretical and practical levels. The study of the issue is based on “Azgapatum” and within the History of The Armeninan church. The history of the Armenian Church is considered the history of Islam from the point of view, approaches and perceptions of Mr. Ormanyan, which can be divided into several parts: information about the founder of Islam Mohammed, Arab invasions and Armenian-Arab relations, multifaceted relations with Islamic countries, Islamic state-religion, religious social relations and Islamic norms.